

Հետազոտական աշխատանք

<p>Կազմակերպության տվյալներ</p> <ul style="list-style-type: none"> • Անվանում, հասցե • Տնօրեն • Էլ. հասցե • Հեռախոս 	<p>«Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամ Վահրամ Սողոմոնյան masnakayindproc@gmail.com +37493581908</p>
<p>Հետազոտության թեմա/վերնագիր</p> <ul style="list-style-type: none"> • Հետազոտության թեմա 	<p>Վերլուծական մտածողության ձևավորումը ինտեգրված դասերի միջոցով</p>
<p>Ուսուցչի տվյալներ</p> <ul style="list-style-type: none"> • Անուն, ազգանուն, հայրանուն • Մասնագիտություն • Հեռախոս • Էլ. հասցե • Դասավանդվող առարկաներ • Դասարաններ 	<p>Նարե Հովհաննիսյան Արմենի Կենսաբանության ուսուցչուհի 093 95 00 62 narehovhannisyan2022m@gmail.com Կենսաբանություն, բնագիտություն 6-12-րդ դասարաններ</p>
<p>Ուսումնական հաստատության տվյալներ</p> <ul style="list-style-type: none"> • Անվանումը, հասցե • Հեռախոս • Էլ. հասցե (տնօրենության) • Web կայքի հասցե 	<p>Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոց geghashen@schools.am</p>

Բովանդակություն

Ներածություն			3
1. Վերլուծական		մտածողության	
ձևավորումը-----			4
2. Վերլուծական մտածողության զարգացումը դասապրոցեսի ընթացքում-----	9		
3. Վերլուծական մտածողության ձևավորումը ինտեգրված դասերի միջոցով-----	12		4
Եզրակացություններ, առաջարկություններ-----			19
5			
Օգտագործված		գրականության	
ցանկ-----			20 6
Հավելվածներ			7

Ներածություն

Կրթության նպատակը մանկավարժության մեջ միշտ եղել է անփոփոխ՝ ահող սերունդը նախապատրաստել կյանքին, ձևավորել տվյալ ժամանակաշրջանի համար հասարակության լիարժեք անդամ, որը կունենա ինֆնուրույն ֆննադատաբար մտածելու կարողություն ինչպես ակադեմիական առարկաների, այնպես էլ իրական կյանքում գոյություն ունեցող խնդիրների շուրջ: Կրթության խնդիրներն անընդհատ փոփոխվում են՝ պայմանավորված տվյալ հասարակության մեջ տնտեսական, գիտական, մշակութային զարգացմամբ: Այսօր դպրոցում յուրացումը ստուգող թեստային առաջադրանքների մեծ մասը միակ հիշտ պատասխան գտնելու առաջադրանքներն են:

Դասագրքերում գետեղված հարցերում գերակշռում են հիշողությունը ստուգող կամ փաստացի հարցերը: Իմ կարծիքով այդպիսի թեստերը ի վիճակի չեն չափել սովորողների մտածողությունը, այլ, ընդհակառակը, սահմանավիճակում են նրանց ահը և առաջընթացի հնարավորությունները:

Արգելակվում է սովորողների խորը ուսումնառությունը և նրանց մոտ մտախլացիա է առաջանում միայն գնահատական ստանալու կամ հաջող ֆննություն հանձնելու համար: Այսօր հրատապ խնդիր է՝ ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի բովանդակության բարեփոխման գուզահեռ փոփոխել դասավանդման և ուսուցման ներկա ռազմավարությունները և ռնը՝ կարևորելով վերլուծական մտածողությունը: Աշակերտների մտածելու, տրամաբանելու, վերլուծելու և եզրակացություն անելու ունակությունները զարգացնելու համար պետք է նրանց հնարավորություն տալ ընտրել սեփական դիրքորոշում և ապացուցել այն:

Աշակերտներին մտածել սովորեցնելու համար պետք է նրան հնարավորություն տալ իրեն մտածող էակ գիտակցելու, սեփական դիրքորոշում ընտրելու և ապացուցելու այն: Վերլուծական մտածողության ձևավորման և զարգացման գործում անգնահատելի է ուսուցչի դերը:

Ուսուցչի դերը ոչ թե նյութի պարզեցումն է, այլ նոր նյութի մատուցումը և սովորողի իր ներկա մակարդակից զարգացման առավել բարձր մակարդակի անցնելու հնարավորության ընձեռումը:

1. Վերլուծական մտածողության ձևավորումը

Հետազոտության ուսումնասիրման նպատակով ուսումնասիրել են տվյալ խնդրի շրջանակներում եղած ժամանակակից մանկավարժական տեսություններ, գիտա-մանկավարժական հոդվածներ, որոնք կօգնեն ներկայացնել առկա հիմնական մտեցումները, որոնք տարածված են մանկավարժության մեջ հաջողություններ արձանագրած տարբեր պեսություններում: Ձերում Բրունների «կառուցողական» տեսությունը հիմնված է նախադրության ուսումնառության վրա: Հստ Բրունների՝ վերլուծական մտածողությունը միշտ մի ֆայլ առաջ անցնելու կարողություն է: Նա դեմ էր կրթության բովանդակության ստանդարտացմանը և ստանդարտ թեստերի կիրառմանը: Ուսուցիչը և աշակերտը պետք է մտնեն ակտիվ

երկխոսության մեջ (ինչպես, օրինակ, սակրատյան ուսուցման ժամանակ): Կրթության բովանդակությունը պետք է կազմակերպվի պարուրած: Ուսուցիչը վարպետորեն ձևակերպված բաց հարցերով կարող է խթանել երեխայի զարգացումը և անցումը մի աստիճանից մյուսը (1966թ.): Բազմաբնույթ մտածողության տեսությունը մշակվել է հոգեբան Հովհարդ Գարդների կողմից: Գարդները (1983թ.) ձևակերպեց մտածողության յոթ տիպերը. լեզվական, սրամաբանական-մաթեմատիկական, տարածական, երաժշտական, մարմնաշարժողական, միջանձնային, ներանձնային: Ավանդական դպրոցը մեծապես հենվում է առաջին երկուսի վրա: Այս տեսությունը նախընտրում է մտածողության բազմազանությունը, ինչպես նաև ինքնագնահատման մեխանիզմները հաշվի առնող մեթոդներ, որոնք օգնում են աշակերտին հասկանալ սեփական մտածողությունը: Գարդների հետազոտությունը թեստերից և թեստերի նմանակումից ազատվելու նպատակ ունի: Եւ Վիգոտսկու կողմից մշակվել է սոցիալ-հանաչողական տեսությունը, ըստ որի ուսուցումը կառուցողական գործընթաց է, որը ներգրավում է երեխային և մեծահասակին սոցիալական հասարակությունների մեջ: Վիգոտսկու նշանակալից գաղափարներից մեկը «Մերձավոր և ակտուալ գոտիների» տեսությունն է: Հիշյալ տարբերություն գոյություն ունի այն բանի միջև, թե ինչը երեխան կարող է անել ինքնուրույն, (զարգացման ակտուալ մակարդակ) և ինչը՝ օգնության միջոցով (զարգացման պոտենցիալ մակարդակ): Վիգոտսկին այդ տարբերությունը անվանում է զարգացման մերձակա գոտի, որն արտացոլում է զարգացման և ուսուցման փոխադարձ կապը: Ըստ Վիգոտսկու՝ առարկայի վերաբերյալ գիտելիքները կարևոր են, սակայն հարցեր, խնդիրներ լուծելը ֆաջալերում են առաջ գնալ, որի արդյունքում էլ կառուցվում է նոր գիտելիք (1930թ.): Ջոն Դյուին իր փիլիսոփայությունը անվանում է ինտրումենտալիզմ, ըստ նրա բոլոր մտքերը գործիքներ են և սովորում են «կատարելով» և ոչ թե մեխանիկական մտապահումով: 4 Դյուին պատկերացում էր հարցադրման ընդհանուր դրույթները՝ պնդելով, որ դա գիտելիքի ձեռքբերման ուղիները հասկանալու միակ իրական ձևն է: Դյուին մանկավարժությունն ուսուցչից պահանջում է ստեղծել ժողովրդականության մթնոլորտ, որտեղ պետք է երեխաներին սովորեցնել ոչ թե «ի՞նչ մտածել», այլ «ինչպե՞ս մտածել»: Նա համագործակցային աշխատանքը ակադեմիական գիտելիքից վեր էր դասում (1900թ.): [1, 14-15]

Ժան Պիաժեն երեխաների մտածողության ձևերը դասակարգեց ըստ չորս որակական փուլերի՝ զգացաբարժողական (0-2 տարեկան), մինչկատարողական (2-7 տարեկան), կոնկրետ կատարողական (7-11 տարեկան), ձևական կատարողական (11-16 տարեկան): Ըստ Պիաժեի՝ երեխաները ծնվում են մտավոր զարգացման պոտենցիալ կարողություններով և գտնում էր, որ ժամանակի ընթացքում երեխայի մտածողությունն աճում և բարդանում է զարգացման մի փուլից մյուսին անցնելիս: Պիաժեի տեսության հիմնական յուրահատկությունն այն է, որ մտածողությունը ակտիվ մասնակցություն է ունենում սովորելու ընթացքում (1950թ.): Քննադատական մտածողության ձևավորման և զարգացման տեսանկյունից պետք է առավելապես շեշտել վերլուծության համադրման և գնահատման մակարդակները: Վերլուծությունը և

համադրումը միևնույն մտածողական գործընթացի երկու կողմերն են: Նրանք փոխկապակցված և փոխադրանալիքով են: Այնպես, ինչպես վերլուծությունը իրագործվում է համադրման միջոցով, այնպես էլ համադրվում և իրագործվում է վերելուծության միջոցով: Քննադատական մտածողությունը ենթադրում է բննողական մոտեցում, այսինքն խնդրո առարկայի բազմակողմանի բննարկում: Քննադատականը վերլուծական իմաստով պետք է հասկանալ, քանի որ փորձում է զարգացնել համակողմանի մտածելու կարողությունը: Քննադատական մտածողության ռազմավարությունը ունի բավականին հին արմատներ: Այն իր մեջ ամփոփել է մի շարք մանկավարժական ռազմավարությունների (պրոբլեմային ուսուցման, համագործակցային ուսուցման, խաղային ուսուցման) արդյունավետ, արդիական կողմերը՝ դառնալով առավել ընդգրկուն և ժամանակի պահանջներին համահունչ: Տարբեր հեղինակներ առաջ են քաշում բննադատական մտածողության տարբեր սահմանումներ: Հստ Միքայել Սկրիվենի և Ռիչարդ Փոլի բննադատական մտածողությունը դիտարկման, փորձի, դատողության, պատճառաբանության կամ հաղորդակցման միջոցով հավաքված տեղեկատվությունն է ակտիվորեն և հմտորեն համակարգելու, կիրառելու, սինթեզելու և գնահատելու մտավոր գործընթաց է, որը ծառայում է որպես ուղեցույց անհատի համոզմունքների ձևավորման ու գործողությունների համար (Scriven & Poul, 1987): 5 Ցուլին իր հետազոտության արդյունքում գտել է, որ բննադատական մտածողության զարգացումը մեծապես կախված է նաև դասավանդման տեխնիկայից (Tsui, 1999): Ի տարբերություն էսսեների, թեստային բննությունները, որտեղ ուսանողը պետք է հարցի պատասխանը ընտրի նախանշված տարբերակների միջից, ամենևին չեն նպաստում բննադատական մտածողության զարգացմանը: Հստ Ռանդի Գարիսոնի մեակած մոդելի, բննադատաբար մտածելու պայմաններում անհատի մտածողությունն անցնում է հինգ փուլերով. խնդրի նույնականացում, սահմանում, ուսումնասիրում, կիրառում և ինտեգրում: Նման մտածողություն ունենալու համար անհրաժեշտ է խոր գիտելիք բննարկվող առարկայի վերաբերյալ: Գարիսոնը նշում է, որ ուսուցիչը պարտավոր է ուսանողին հարցերի միջոցով դրդել վիճարկելու տարբեր գաղափարներ, մտադրություններ, կանոններ, քանի որ բննադատական մտածողությունը սովորողից պահանջում է ստանձնել գաղափարներ և խնդիրներ բննելու և հետևություններ անելու պատասխանատվություն (Garrison, 1991): Հստ Սիեգելի (Siegel, 1988) բարձրագույն կրթության՝ դասավանդողի հիմնական դերը բննադատաբար մտածողի օրինակ ծառայելն է: Այսինքն դասավանդողն առաջինն ինքը պետք է պատրաստ լինի վիճարկելու սեփական գաղափարներն ու արժեքները և դրանով իսկ օրինակ ծառայի իր ուսանողներին առջև: Ռոբերտ Էննիսը իր՝ բննադատական մտածողության գնահատումը հողվածում նշում է այն բայերը, որ պետք է իրականացնի անհատը բննադատական մտածողության ժամանակ: Այդ բայերը կարելի է օգտագործել բննադատական մտածողությունը չափող թեստ կազմելու նպատակով (Ennis, 1993): Ջերի Փերֆինսը և Էլիզաբեթ Մլըրֆին 2006թ. -ին մեակել են 4 կատեգորիաներից բաղկացած մի մոդել, որի միջոցով հնարավոր կլինի հասկանալ և չափել ուսանողների բննադատական մտածողության դրսևորումը: Այդ կատեգորիաներն են

պարզաբանում՝ պարզաբանում, գնահատում, հետևության կառուցում, ռազմավարության մշակում (Perkins & Murphy, 2006): Յուրաքանչյուր կատեգորիա ունի իր ինդիկատորները, որոնք սահմանված են անման կարգով: Վերլուծական մտածողության զարգացման համար կարևոր են և՛ դասավանդման մեթոդները, և՛ դասավանդվող առարկաները: Այս եզրահանգումն արել է նաև մայր Լինդոն Մֆունը: Նա փորձել է հասկանալ, թե արդյոք բննադատական մտածողությունը պետք է դասավանդվի ընդհանուր, փոխանցելի հմտությունների միասնություն, թե՞ հմտությունների առանձին խմբեր՝ յուրաքանչյուրը ներհատուկ որևէ ակադեմիական առարկայի: Հստակ նաև ակադեմիայի շրջանակներում զարգացած հմտությունների խումբը բավարար չէ այլ խնդիրներ բննարկելիս բննադատական մտածողություն դրսևորելու առումով: Կարելի է պնդել նաև այն, որ բննադատական մտածողության համար անհրաժեշտ հմտությունները հնարավոր չէ կիրառել առանց խնդրո առարկայի վերաբերյալ նախնական գիտելիքի: Ուստի բննադատական մտածողության ձևավորումն ու զարգացումը պետք է լինի և առարկայական ծրագրի և ուսումնական պլանի զարգացման հիմքում: Վերադառնալով դասավանդման մեթոդներին նշենք, որ գրեթե բոլոր ակադեմիայի հեղինակները համակարծիք են, որ սովորելու համագործակցային մեթոդը ուսանողներին առավել լայն հնարավորություն է տալիս գաղափարներ վերլուծելու, սինթեզելու և գնահատելու: Ուստի բննադատական մտածողության ձևավորումն ու զարգացումը պետք է և՛ առարկայական ծրագրի և՛ ուսումնական պլանի զարգացման հիմքում: Վերադառնալով դասավանդման մեթոդիկային՝ անհատական և համագործակցային, Գոֆհեյլը պարզել է, որ մտածողության թեսթերը լրացնելիս սովորելու համագործակցային մեթոդը ուսանողներին առավել լայն հնարավորություն է տալիս գաղափարները վերլուծելու, սինթեզելու և գնահատելու (Gokhale, 1995): Ուսումնասիրելով բննադատական մտածողության ձևավորման և զարգացման համար գրականության մեջ գոյություն ունեցող մոդելները, ակնհայտ է դառնում, որ նրանք շատ կամ քիչ չափով հենվում են դեռևս 1956թ. Բենջամին Բլումի կողմից մշակված տախտնոմիայի վրա: Բլումի տախտնոմիայի հանաչողական խումբը բաղկացած է վեց մակարդակներից՝ գիտելիք, ընկալում, կիրառում, վերլուծություն, համադրում, գնահատում: Տախտնոմիայի առաջին երեք մակարդակները հատուկ են ակադեմիական առարկաներին, իսկ հմտությունները՝ վերլուծությունը, համադրում և գնահատումը ընդհանուր են և չեն կարող սահմանափակվել մեկ առարկայով: Ուսուցիչը պետք է սովորողին ընձեռնի բազմաթիվ հնարավորություններ այդ երեք մակարդակներում ներգրավվելու համար: [2, 45-47]

Այսպիսով, հարցերն ու հարցադրումները նպաստում են.

1. ուսուցման գործընթացում սովորողների ներգրավվածության անին և ակտիվությանը
2. նյութի յուրացման և ընկալման շրջանակների ընդլայնմանը
3. նյութի ընկալման մակարդակը պարզելուն և գնահատելուն
4. սովորողների վերլուծական մտածողության զարգացմանը

5. առակերտի փաստերը միահյուսելու և ինտեգրելու հմտությունների զարգացմանը

6. առակերտի համագործակցային ուսումնասիրության սովորույթների զարգացմանը

7. լայնախոհության բարձրացմանը

8. փաստերի վերափոխմանը գիտելիքի

9. առակերտների համար ակտիվ և հետաքրքիր գործընթացին

10. նոր մտքերի հասկացությունների ձևավորման և զարգացման խթանմանը:

Սրանք այն արդյունավետ բաղադրիչներն են, որոնք կարող են բարձր մակարդակի մտածողություն և գիտելիք:

Վերլուծական մտածողությունը մտածողության մի գործընթաց է, որը ներառում է

- փաստերի, իրադարձությունների, երեւույթների ուշադիր վերլուծություն
- տրամաբանական շղթաներ կառուցելու ունակությունը
- տեղեկատվության մեծ հոսքի մեջ հիմնականը երկրորդականից առանձնացնելու ունակությունը
- տեսլական հեռանկար
- մտքերի հստակ հայտարարություն
- անուղղակի հերքականությունը [3, 70-77]

2. Վերլուծական մտածողության զարգացումը դասապրոցեսի ընթացքում

Վերլուծական միտքը բարձր կազմակերպված միտք է: Այսօրվա աշխարհում կարեւորագույն պարամետրը հսկայական տեղեկատվության մշակման արագությունն է, որն անընդհատ փոփոխվում է, լրացվում է: Մարդու բարձր վերլուծական կարողությունները պահանջում են ավելի մեծ պահանջարկ, եւ այդպիսի մասնագետներ ամբողջ աշխարհում անհրաժեշտ են: Վերլուծական ունակությունների զարգացումը օգնում է անհատին, առանց ավելորդ զգացումների, հաղթահարելու դժվար իրավիճակները: Վերլուծելու ունակությունը օգնում է տեսնել արտադրանքը, որտեղ թվում էր, թե գոյություն չունի եւ պատճառահետեւանգային հարաբերությունների տրամաբանական շղթա կառուցել: Դետեկտիվի ժանրում ընթերցանությունը, ինչպես նաեւ հատուկ մտածելակերպի զարգացման վերաբերյալ հատուկ գրականությունը նպաստում է վերլուծական հմտությունների բարելավմանը. Յուրաքանչյուր մարդ սաղանդավոր է եւ եզակի: Վերլուծական մտածելակերպը հազվադեպ հասկանալի է մեկին է, որը, ունենալով, կարող է հաջողակ լինել կյանքի շատ ոլորտներում: Գիտության, բժշկության, կրթականության, հոգեբանության մեջ անհրաժեշտ է վերլուծել եւ տրամաբանել: Տաղանդները սկսում են իրենց մանկությունից, իմաստուն ծնողները, նկատելով իրենց երեխայի ուժեղ կողմերը, սկսում են դրանք զարգացնել: Որ գործոնները որոշում են մարդու վերլուծությունը վերլուծելու համար: Մեկ պատասխանը

ուղեղի ձախ կիսագնդի գերակշռությունը կամ գերիշխանությունն է, որը ենթադրում է տեխնիկական մտածողության, տրամաբանության եւ գգայարանների վրա մտքի տարածման համար:[4, 40-46]

Վերլուծական մտածողությունը մտածողության մի գործընթաց է, որը ներառում է

- փաստերի, իրադարձությունների, երեւոյթների ուշադիր վերլուծություն
- տրամաբանական շղթաներ կառուցելու ունակությունը
- տեղեկատվության մեծ հոսքի մեջ հիմնականը երկրորդականից առանձնացնելու ունակությունը
- տեսլական հեռանկար
- մտքերի հստակ հայտարարություն
- անուղղակի հերթականությունը

Վերլուծական մտածելակերպը կարող է համարել որակը ֆննդատականությամբ:

Քննադատական մտածելակերպը օգնում է վերլուծաբանին օբյեկտիվորեն նայել գաղափարներին, որոշումներին, տեսնել թույլ կողմերը եւ ստուգել ենթադրությունները եւ փաստերը: Խիստ ֆննդատական մտածելակերպով կա ուշադրություն դարձնելու մարդկանց թերությունների, դատողությունների, որոշումների վրա, որոնք խոչընդոտում են օբյեկտիվորեն գնահատելու, կիրառելու և դրական արդյունքներ ստանալու համար:

Վերլուծական մտածողությունը սերտորեն փոխկապակցված է տրամաբանական մտածողության հետ եւ հիմնվում է տրամաբանական շղթաների եւ կապերի կառուցման վրա: Գիտնականները վերլուծական մտածելակերպը համարում են աբստրակտ տրամաբանական մտածողության հայեցակարգին հավասար: Ցանկացած մտածողության գործողությունը նուրբ եւ բարդ գործընթաց է, որը ներառում է ինչպես ներքին մեխանիզմները, այնպես էլ արտաքին գործոնները: Վերլուծական միտքը, ինչպես մյուս մարդու բնավորությունը կամ տաղանդը, չպետք է մնա որոշակի «կետում», անհրաժեշտ է մշակել այն, ինչ տրվում է ծնունդից: Հայտնի խոսքը. «Հաջողությունը տաղանդի 1 տոկոսն է եւ 17 աշխատանքի 99 տոկոսը» կիրառելի է նաև վերլուծական հմտությունների զարգացման համար: Տարրական դպրոցից պետք է մշակել երեխայի ուղեղը՝ տալով համապատասխան առաջադրանքներ:

Այն է՝

- խաչքառ հանելուկների, սկանավորումների լուծում
- ընթերցող պատմություններ, հերոսների գործողությունների, մոտիվացիայի, մղումների մասին պատկերացումներով
- բառախաղեր
- շաշկի կամ շախմատ խաղալ Հիմնական դպրոցում հարց ու պատասխանի, մտազրույցի, գծապատկերների միջոցով երեխայի մոտ պետք է զարգացնել մտածելու, վերլուծելու, եզրակացություններ անելու կարողունակությունները:[2, 39-47]

Ավագ դպրոցում սովորողը ինֆնուրույն պետք է կարողանա բացահայտել հիմնախնդիրը, ուսումնասիրել խնդրի առանձին կողմերը, պարզել դրանց պատճառահետևանքային կապերը, տարբերել կարևորը երկրորդականից:

Երեխայի համար օգտակար կլինի համատեղ զբաղմունք ունենալ ծնողների հետ հանելուկներ, ռեբուսներ, նկարների տարբերություններ գտնելու, բացահայտող օբյեկտների որոնման համար: Մեծահասակների մոտ ձախ կիսագնդի եւ վերլուծական կարողությունների զարգացումը հնարավոր է ցանկացած վարժություն կատարելու միջոցով:

Դրանցից են .

1. Արտաֆինից ստացված ցանկացած տեղեկատվություն վերլուծել՝ ֆաղափական և տնտեսական տեսակետից . որոնք են ֆաղափական գործիչների, տնտեսագետների փաստարկները, որոնք կասկածներ են առաջացնում, որոնք կարող են լինել հնարավոր ճիշտ տարբերակները և այլն:

2. Ամեն օր ստեղծվում են տարբեր իրավիճակներ, որոնք լի են չնախատեսված իրադարձություններով և դրանցից բխող հետևանքներով: Անհրաժեշտ է մտածել մի քանի լուծումների մասին, որոնցից մեկը լավագույնն է: Հետո պետք է փաստերով հիմնավորել, թե ինչու է այդ լուծման տարբերակը լավագույնը:

3. Պարբերաբար լուծել տրամաբանական խնդիրներ: Դա կօգնի տարբեր իրավիճակներից հնարավոր օպտիմալ տարբերակով ելքեր գտնելու:

4. Ծրագրավորել ուսուցման պրոցեսը, ստեղծել նպատակ և մշակել ֆայլեր նպատակին հասնելու համար, կետ առ կետ իրականացնել մշակված ֆայլերը,

5. Ցանկացած պատմական իրողության մասին ռեալ պատկերացում կազմելու համար հավաքել տեղեկություն տարբեր աղբյուրներից, ուսումնասիրել տվյալ պատմական ժամանակաշրջանը և մարդկային փոփոխաբերություններ, միջպետական կապերը, հարևան երկրներում տիրող իրավիճակը:

6. Ստեղծված բարդ իրավիճակում մշակել լուծումների եւ իրավիճակի զարգացման տարբերակներ՝ հենվելով պատճառահետևանքային կապերի ուսումնասիրման և պարզաբանման վրա:

7. Ընդունված որոշումների հիման վրա մշակել գործողությունների պլան և հերթական գործողություններով հասնել ցանկալի արդյունքի: [3, 80-88]

3. Վերլուծական մտածողության ձևավորումը ինտեգրված դասերի միջոցով

Կենսաբանությունը համարվում է ըստ բնույթի ինտեգրված առարկա: Այն ամբողջությամբ լի է միջառարկայական կապերով և առաջարկում է աշակերտներին գիտելիքներ գիտության տարբեր բնագավառներից: Միջառարկայական կապերը նպատակաուղղվում են օբյեկտիվ աշխարհի բաղկացուցիչ մասերի եռամիասնության՝ բնություն-մարդ-հասարակություն, հասկացության ըմբռնմանը: Կարելի է միանշանակ պնդել, որ բնագիտական առարկաները պետք է ուսումնասիրվեն միջառարկայական կապերի ստեղծման հիման վրա: Բնագիտության, կենսաբանության, ֆիզիկայի, քիմիայի, աշխարհագրության

թեմաների փոխկապակցված ուսումնասիրությունը սովորողներին ցույց է տալիս աշխարհի միասնականությունը: Միջառարկայական կապերի պահպանումը ժամանակակից դպրոցում ուսուցման կարևորագույն սկզբունքներից մեկն է: Այն ապահովում է բնագիտական և հումանիտար առարկաների փոխադարձ կապը, և դրանց կապը կյանքի հետ: Կենսաբանության ուսուցիչը, այլ առարկաների ուսուցիչների հետ համագործակցելով, միջառարկայական կապերի միջոցով իրականացնում է ուսումնադաստիարակչական խնդիրների ամբողջական լուծում: Ուսուցիչները դժվարություններ են ունենում միջառարկայական կապերը գործնականում կիրառելու ժամանակ: Հիմնական պատճառը կոնկրետ թեմաներում միջառարկայական կապերի իրագործմանն ուղղված բավարար մեթոդական նյութերի բացակայությունն է, ինչպես նաև ուսուցիչների՝ միասին աշխատելու, համագործակցելու թույլ կարողությունը: Սակայն ժամանակակից ուսուցիչը կենսաբանությունից միջառարկայական կապեր իրագործելիս պետք է կարողանա ստեղծագործական մոտեցում ցուցաբերել: Դրա համար նա պետք է տիրապետի տեսական հարցերին և խելամիտ օգտագործի մեթոդական նյութերը, տեղեկատվական տեխնոլոգիաների ընձեռած հնարավորությունները՝ գտնելով կենսաբանության ուսուցման ժամանակ միջառարկայական կապերի իրագործման նոր ձևեր և ուղիներ՝ հաշվի առնելով առարկայական ծրագրերն ու չափորոշիչները: [2, 10-17]

Նպատակը և հետազոտական հարցը	Ուսումնասիրության նպատակն է վերլուծական մտածողությունը ինտեգրված դասերին: Հարց: Արդյո՞ք կարելի է ինտեգրված դասերի միջոցով բարձրացնել աշակերտների վերլուծական մտածողությունը:
Ո՞ր առանցքային կոմպետենցիային/կարողունակությանն է ուղղված նպատակի ուսումնասիրությունը	լեզվական գրագիտություն
Հետազոտության թիրախային խումբը և շրջանակը /բանակ, սեռային բաշխում/	8-րդ դասարան Տղա՝ 10 Աղջիկ՝ 8

Օգտագործված հետազոտական մեթոդները, գործիքները (օրինակ՝ ֆունկցիոնալ հետազոտություն՝ հարցաթերթիկի միջոցով, որակական հետազոտություն՝ խորին հարցազրույցի միջոցով եւ այլն)	որակական հետազոտություն
Հետազոտության իրականացման ժամանակահատվածը	Սեպտեմբեր 2023 թ.

Հիմնական բովանդակություն

<p>Գրականության ակնարկ</p> <ul style="list-style-type: none"> • Մեջբերումներ արդեն արված հետազոտություններից, • Մեջբերումներ գրականությունից, տեղեկության վստահելի աղբյուրներից: <p><u>Պարտադիր է կատարել հղում աղբյուրին</u></p>	<p>Պարզապես դադարեք ամեն ինֆորմացիա կամ ընդունել, կամ կասկածել, մի խուսափեք ցանկացած իրադարձություն առողջ բնագիտության ենթարկելուց, նայե՛ք իրադարձություններին տարբեր տեսանկյուններից, փորձե՛ք տեսնել ամբողջ պատկերը, այլ ոչ թե նրա անհատական հանելուկային մասերը, խոսակցության ընթացքում սրամաքանական շղթաներ կառուցե՛ք:[1, 39-41]</p>
Հետազոտության ընթացքը	<p>Առարկայախումբ կենսաբանություն, ֆիզիկա, ֆիլիա</p> <p>Դասարան 8-րդ Տևողությունը 90ր.</p> <p>Թեմա Շնչառական համակարգ</p> <p>Նպատակը</p> <p>Առարկայի կիրառում</p> <p>1.Կենսաբանության, ֆիզիկայի և ֆիլիայի միջև գործող օրենքների և օրինաչափությունների փոխադարձ կապի մասին:</p>

2. Շնչառության նշանակությունը, շնչառական համակարգի օրգանները, կառուցվածքը, ֆունկցիաները

3. Շնչառական շարժումների կարգավորման մեխանիզմը՝ ֆիզիկայի և կենսաբանության օրինաչափությունները:

4. Ձայնի առաջացման մեխանիզմը՝ ֆիզիկական և կենսաբանական օրինաչափությունները:

5. Գազափոխանակությունը թոփերում և հյուսվածքներում և դրա հետ կապված ֆիզիկական, քիմիական և կենսաբանական օրինաչափությունները:

ԿԿարողանա՝

1. Համակարգել, ընդհանրացնել և բացատրել շնչառության հետ կապված ֆիզիկա- քիմիա- կենսաբանական գործընթացների մեխանիզմը, դրանց փոխադարձ կապը և դերը մարդու կյանքում:

2. Կատարել պարզագույն փորձեր՝ կապված դիֆուզիայի, մթնոլորտային ճնշման, շնչառական շարժումների, ձայնալարերի տատանման հաճախությունը որոշող և այլն:

3. Ցուցաբերել I օգնություն՝ շնչառության խանգարման հետ կապված տարբեր իրավիճակներում:

Կարևորի՝

1. Բնագիտական առարկաների փոխադարձ կապը և նրանց դերը մարդու կյանքում:

2. Շնչառական համակարգի հիգենայի կանոնների իմացումը և կիրառումը կյանքի տարբեր բնագավառներում:

3. Առողջ ապրելակերպի կանոնները՝ կապված շնչառական համակարգի հետ: Կանխարժուկ- պասստոններ, մարդու ներքին օրգանների կազապարվածք, պրոյեկտոր, համակարգիչ, ննջաչափ, փորձանոթներ, քիմիական նյութեր, կամերոն:

Մերոդներ — պաստառագրում, ապագայի անիվ, մտագրոհ:

Դասի կազմակերպման ձև՝ խմբային աշխատանք

Դասի ընթացքը՝

Կազմակերպչական — դասարանը հանդես է գալիս համագործակցային 4 խմբերով, որոնց նախապես տրված է նյութը և հանձնարարված պաստառագրում, շնորհանդեսի պատրաստում:

Թեմաներ՝

I խումբ — կենսաբաններ — Շնչառության նշանակությունը, օրգանները, կառուցվածքը

II խումբ — ֆիզիկոսներ — Շնչառական շարժումներ, գազափոխանակություն

III խումբ — ֆիզիկոսներ — Ջայնի առաջացումը, շնչառության կարգավորումը

Խթանում Այս թեման անցնելիս ինչ երևույթերի և օրնաչափությունների հանդիպեցինք, որոնք ձեզ ծանոթ էին բնագիտական այլ առարկաներից:

Աշակերտները թվարկում են և համապատասխանեցնում՝ Դիֆուզիա — ֆիզիկա, ֆիմիա Մթնոլորտային ճնշում — ֆիզիկա Հեմոգլոբինի առաջացրած միացությունը՝ թթվածնի, CO₂ —ի և CO —ի հետ — ֆիմիա Փիմիական կապեր՝ ուժեղ, թույլ, անկայուն միացություն, հայտն միացություն — ֆիմա

Իմաստի ընկալում Խմբերը ներկայացնում են իրենց պատրաստած պաստառները.

I խումբ ներկայացնում են շնչառական օրգանների կառուցվածքը

II խումբ Շնչառական շարժումներ, գազափոխանակությունը քոֆերում:

Ֆիզիկայի ուսուցիչը անդրադառնում է մթնուլարտային ննժամը, դիֆուզիայի երևույթին:

Աճակերտները վեր են հիշում անցած նյութը և պարզապես փորձերի միջոցով բացատրում այդ երևույթների էությունը: Չափում են իրենց ընկերների ննժամները, կատարում

եզրահանգումներ: Կենսաբանության ուսուցիչը շեշտը դնում է այդ երևույթների կենսաբանական նշանակության վրա:

III խումբ Ներկայացնում են ձայնի առաջացումը, շնչառության կարգավորումը: Ֆիզիկայի ուսուցիչը բացատրում է ձայնի առաջացումը, մեխանիզմը, ձայնալարերի ձևից կախված ձայնի բարձր կամ ցածր լինելը: Քիմիայի ուսուցիչը անդրադառնում է նյութերի հոտ, գալու կանոններին, ներկայացնում է սխալվելու վտանգները: Կենսաբանության ուսուցիչը բացատրում է այդ երևույթների ընդհանրական բնույթը:

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՄԱՍ

Մերոդիկան Ընտրել են բնագիտական առարկաներ դասավանդող ուսուցիչների խումբ: Հետազոտությունը կատարել են ուսուցիչներին հարցադրումներ ուղղելով; Սույն հարցաժողովը նպատակ ունի ուսումնասիրել ուսուցիչների և աճակերտների վերաբերմունքը միջառարկայական դասերի կազմակերպման, որպես ուսուցման որակի բարելավման արդյունավետ միջոց:

1. Կարևորում է միջառարկայական կապերի կիրառումը կենսաբանության դասավանդման գործում, որպես գիտական գիտելիքների արդյունավետ բարձրացման միջոց:

- Այո
- Ոչ

արդյունք է, որն իրականանում է կրթության տարբեր մեթոդների և միջոցների փոխհամաձայնեցված կապերի օգնությամբ: Հնդհանրացնելով կարելի է ասել, որ միջառարկայական կապերի միտքը պետք է շարունակել և զարգացնել: Մեր հասարակության համար անհրաժեշտ է մշակել կենսաբանորեն գրագետ, դաստիարակված անձի ձևավորման համակարգ, ով հիշտ է հասկանում կյանքի իմաստը՝ որպես Երկրի վրա բարձրագույն արժեքի, տիրապետում է համակարգված մտածողության՝ հիմնված էկոլոգիական մոտեցման վրա, կարող է ապահովել բնության պահպանությունը, արտադրության էկոլոգիական մշակույթը, կվարի առողջ կենսակերպ, ունակ կլինի յուրացնելու ժամանակակից կենսաբանական գիտության մտքերի, մոդելների զարգացնող ուղղությունները՝ մոլեկուլային կենսաբանությունը, գենետիկան, էկոլոգիան, գենային ինժեներիան, կենսաֆիզիկան, կենսաֆիզիկան և այլն: Առանց ինտեգրության որակյալ կրթություն գոյություն ունենալ չի կարող:

<p>Վերահանված արդյունքներ, եզրակացություններ, պատասխան հետազոտական հարցին</p>	<p>Ինչպես նշվեց վերևում, այնքան էլ դժվար չէ զարգացնել վերլուծական մտածելակերպը, գլխավորն այն է, որ ծույլ չլինի ձեր ուղեղը: Օրինակ, երբ լսում են լուրերը, չեն սահմանափակվում մեկ հեռուստատալիֆի (ինտերնետային կայքի, քեքթի) առաջարկած տարբերակով, այլ սկսում են ուրիշ աղբյուրների ուսումնասիրություն, համեմատում են փաստերը և ներկայացնում են սեփական եզրակացությունները:</p>
<p>Այլ տեղեկատվություն</p>	

Օգտագործված գրականության ցանկ

1. Մանուկյան Ս. Մանկավարժական և առակերտական դասանպատակները. Երևան 2003թ
2. Սիսակյան Ա.Հ, Թանգամյան Տ.Վ., Միրզոյան Գ.Ի կենսաբանություն 8
3. И. Н. Пономарева, В. П. Соломин, Г. Д. Сидельникова *Общая методика обучения биологии*, Москва, изд. центр << Академия >> 2003г.
4. В. Н. Максимова, Н. В. Груздева *Межпредметные связи в обучении биологии*, Москва, изд. << Просвещение >> 2007г.

